ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁ

ք. Երևան 18.08.2021թ.

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի
թիվ ՍՑ-ՆԳ-2021/219

Հայաստանի Հանրապետության գնումների հետ կապված բողոքներ քննող անձը՝ ի դեմս Գրիգոր Ներսիսյանի, ուսումնասիրելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 05.08.2021թ. թիվ 26/26-1/12501-2021 գրությամբ Ա/Ձ Հմայակ Գեղեցիկի Վարդանյանին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգով ներկայացված հիմքերը, պարզեցի հետևյալը.

1. <u>ՀՀ ֆինանսների նախարարության ներկայացրած փաստերը և պահանջը.</u>

ՀՀ ֆինանսների նախարարությունը, Երևանի քաղաքապետարանի 29.07.2021թ. թիվ 01/61-89183 գրության հիման վրա, 05.08.2021թ. թիվ 26/26-1/12501-2021 գրությամբ նախաձեռնել է Ա/Ձ Հմայակ Գեղեցիկի Վարդանյանին (հետայսու նաև՝ Մասնակից) գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու ընթացակարգ:

2. <u>Ա/Ձ Հմայակ Գեղեցիկի Վարդանյանի կողմից ներկայացված փաստարկները և դիրքորոշումը.</u>

Ա/Ձ Հմայակ Գեղեցիկի Վարդանյանը, Գնումների հետ կապված բողոքներ քննող անձին ուղղված գրությամբ, հայտնել է հետևյալ դիրքորոշումը.

«Երևանի քաղաքապետարանը դիմել է ՀՀ ֆինանսների նախարարություն և հայտնել, որ Պատվիրատուն լուծել է իր և Ա/Ձ Հմայակ Գեղեցիկի Վարդանյանի միջև 14.05.2021թ. կնքված թիվ ԵՔ-ՀԲՄԱՊՁԲ-21/2-2 պայմանագիրը, քանի որ վերջինս չի կատարել պայմանագրով ստանձնած իր պարտավորությունները:

Հարգելի բողոքներ քննող անձ, Պայմանագիրը չկատարելու պատճառը եղել է այն, որ Ա/Ձ Հմայակ Գեղեցիկի Վարդանյանը, նույն ինքը՝ Հմայակ Վարդանյանի մոտ 20.05.2021թ. ախտորոշվել է կիսագնդի ներուղեղային արյունազեղում: Որի բուժումն իրականացնելու համար Հմայակ Վարդանյանը 20.05.2021թ. մինչև 01.06.2021թ. ստացել է ստացիոնար բուժում, իսկ 02.06.2021թ. ավարտելով ստացիոնար բուժումը ստացել է ամբուլատոր բուժում: Այս հանգամանքների բերումով է, որ Մասնակիցը չի կարողացել կատարել Պայմանագրով ստանձնած պարտավորությունները: Հետևաբար հայտնում եմ, որ ես Հմայակ Վարդանյանս չեմ ցանկացել խախտել պայմանագրով ստանձնած որևէ պարտավորություն, սակայն հանգամանքների բերումով, անկախ իմ կամքից չեմ կարողացել դրանք կատարել: Ելնելով նշյալից խնդրում եմ՝ հնարավորության դեպքում ինձ չնդգրկել գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում»:

Ա/Ձ Հմայակ Գեղեցիկի Վարդանյանը, պատշաճ ծանուցված լինելով ՍՑ-ՆԳ-2021/219 ընթացակարգի շրջանակներում 13.08.2021թ. ժամը 10:55-ին հրավիրված նիստի վերաբերյալ, չի ապահովել իր ներկայացուցչի մասնակցությունը:

3. <u>Երևանի քաղաքապետարանի կողմից ներկայացված փաստարկները և դիրքորոշումը.</u>

Երևանի քաղաքապետարանը (հետայսու նաև՝ Պատվիրատու) ՀՀ ֆինանսների նախարարությանն ուղղված 29.07.2021թ. թիվ 01/61-89183 գրությամբ հայտնել է հետևյալը.

«Երևանի քաղաքապետարանի և Ա/Ձ Հմայակ Գեղեցիկի Վարդանյանի միջև 14.05.2021թ. կնքված ԵՔ-ՀԲՄԱՊՁԲ-21/2-2 ծածկագրով գնման պայմանագրի 1.1 կետի համաձայն՝ Վաճառողը պարտավորվում է սույն պայմանագրով սահմանված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով Գնորդին մատակարարել պայմանագրի 1 հավելվածով՝ տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցով նախատեսված ապրանքը, իսկ գնորդը պարտավորվում է ընդունել ապրանքը և վճարել դրա համար:

Պայմանագրի 8.15 կետով սահմանված պայմանագրով նախատեսված պատվիրատուի իրավունքներն ու պարտականությունները ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով իրականացնող Երևանի քաղաքապետարանի ենթակայությամբ գործող մանկապարտեզները էլեկտրոնային փոստի միջոցով բազմիցս դիմել են Ընկերությանը՝ տեխնիկական բնութագրով նախատեսված ապրանքը (խտացրած կաթ) մատակարարելու համար, սակայն համապատասխան քայլեր չեն ձեռնարկվել , Ընկերությունը չի մատակարարում պայմանագրով նախատեսված ապրանքը:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 408-րդ հոդվածի համաձայն՝ պարտավորության խախտում է համարվում այն չկատարելը կամ անպատշաճ (կետանցով, ապրանքների, աշխատանքների և ծառայությունների թերություններով կամ պարտավորության բովանդակությամբ որոշվող այլ պայմանների խախտմամբ) կատարելը:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 345-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ Պարտավորության ուժով մի անձը (պարտապանը) պարտավոր է մեկ այլ անձի (պարտատիրոջ) օգտին կատարել որոշակի գործողություն. այն է՝ վճարել դրամ, հանձնել գույք, կատարել աշխատանք, մատուցել ծառայություն և այլն, կամ ձեռնպահ մնալ որոշակի գործողություն կատարելուց, իսկ պարտատերն իրավունք ունի պարտապանից պահանջել կատարելու իր պարտականությունը:

Պայմանագրի 2.1.7 կետի համաձայն՝ Գնորդը իրավունք ունի միակողմանի լուծել պայմանագիրը (լրիվ կամ մասնակի), եթե վաճառողն էականորեն խախտել է պայմանագիրը.

Վաճառողի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե.

ա) մատակարարվել է անպատշաճ որակի ապրանք որը չի կարող փոխարինվել Գնորդի համար ընդունելի ժամկետում,

բ) ապրանքի մատակարարման ժամկետները խախտվել են 1 օրից ավելի:

Պայմանագրի տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցը սահմանող թիվ 1 հավելվածով սահմանվում է, որ մատակարարումն իրականացվում է առնվազն ամիսը երկու անգամ: Մատակարարման կոնկրետ օրը որոշվում է Գնորդի կողմից նախնական (ոչ շուտ քան 3 աշխատանքային օր առաջ) պատվերի միջոցով՝ էլ. փոստով կամ հեռախոսազանգով:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 466-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ պայմանագիրը լրիվ կամ մասնակի կատարելուց միակողմանի հրաժարվելու դեպքում, երբ պայմանագրից հրաժարվելը թույլատրվում է օրենքով կամ կողմերի համաձայնությամբ, պայմանագիրը համապատասխանաբար համարվում է լուծված կամ փոփոխված:

Հաշվի առնելով այն հանգամանքը, որ Ընկերությունը խախտել է պայմանագրով սահմանված պարտավորությունները՝ Երևանի քաղաքապետարանը, ղեկավարվելով վերը նշված իրավական հիմքերով, միակողմանի հրաժարվել է կնքված պայմանագրից՝ համարելով այն լուծված, պատշաճ ծանուցումն ապահովելու նպատակով՝ կիրառվել է ՀՀ կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի թիվ 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման մասին» Կարգի 33-րդ կետի 17-րդ ենթակետով սահմանված դրույթները:

Ղեկավարվելով «Գնումների մասին» օրենքի (այսուհետ՝ Օրենք) 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի ա. ենթակետի պահանջներով, առաջարկում եմ Ընկերության նկատմամբ կիրառել Օրենքի 50-րդ հոդվածի 7-րդ մասի 2-րդ կետով սահմանված դրույթը»:

Պատվիրատուն, պատշաճ ծանուցված լինելով ՍՑ-ՆԳ-2021/219 ընթացակարգի շրջանակներում 13.08.2021թ. ժամը 10:55-ին հրավիրված նիստի վերաբերյալ, չի ապահովել իր ներկայացուցչի մասնակցությունը:

4. <u>ՍՑ-ՆԳ-2021/219 ընթացակարգի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը.</u>

ՍՑ-ՆԳ-2021/219 ընթացակարգի քննության համար էական նշանակություն ունեն հետևյալ փաստերը.

1. Երևանի քաղաքապետարանի և Ա/Ձ Հմայակի Գեղեցիկի Վարդանյանի միջև 14.05.2021թ. կնքվել է «ԵՔ-ՀԲՄԱՊՁԲ-21/2-2» ծածկագրով ապրանքի ձեռքբերման գնման պայմանագիր (հետայսու նաև՝ Պայմանագիր), որի 1-ին կետի 1.1 ենթակետի համաձայն՝

Վաճառողը պարտավորվել է սույն պայմանագրով սահմանված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով Գնորդին մատակարարել պայմանագրի N 1 հավելվածով՝ Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցով նախատեսված ապրանքը, իսկ Գնորդը պարտավորվում է ընդունել ապրանքը և վճարել դրա համար:

2. Պայմանագրի N 1 հավելվածով՝ տեխնիկական բնութագրով, ապրանքի մատակարարման ժամկետ է սահմանվել պայմանագիրն ուժի մեջ մտնելու օրվանից մինչև 2021թ. դեկտեմբեր ամսվա համար սահմանված վերջին աշխատանքային օրը ներառյալ:

3. Ա/Ձ Հմայակ Գեղեցիկի Վարդանյանին ուղղված 27.07.2021թ. թիվ 01/61-17672 ծանուցմամբ Երևանի քաղաքապետարանը հայտնել է հետևյալը.

«Երևանի քաղաքապետարանի և Ա/Ձ Հմայակ Գեղեցիկի Վարդանյանի միջև 14.05.2021թ. կնքված ԵՔ-ՀԲՄԱՊՁԲ-21/2-2 ծածկագրով գնման պայմանագրի 1.1 կետի համաձայն՝ Վաճառողը պարտավորվում է սույն պայմանագրով սահմանված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով Գնորդին մատակարարել պայմանագրի 1 հավելվածով՝ տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցով նախատեսված ապրանքը, իսկ գնորդը պարտավորվում է ընդունել ապրանքը և վճարել դրա համար:

Պայմանագրի 8.15 կետով սահմանված պայմանագրով նախատեսված պատվիրատուի իրավունքներն ու պարտականությունները ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով իրականացնող Երևանի քաղաքապետարանի ենթակայությամբ գործող մանկապարտեզները էլեկտրոնային փոստի միջոցով բազմիցս դիմել են Ընկերությանը՝ տեխնիկական բնութագրով նախատեսված ապրանքը (խտացրած կաթ) մատակարարելու համար, սակայն համապատասխան քայլեր չեն ձեռնարկվել , Ընկերությունը չի մատակարարում պայմանագրով նախատեսված ապրանքը:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 408-րդ հոդվածի համաձայն՝ պարտավորության խախտում է համարվում այն չկատարելը կամ անպատշաճ (կետանցով, ապրանքների, աշխատանքների և ծառայությունների թերություններով կամ պարտավորության բովանդակությամբ որոշվող այլ պայմանների խախտմամբ) կատարելը:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 345-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ Պարտավորության ուժով մի անձը (պարտապանը) պարտավոր է մեկ այլ անձի (պարտատիրոջ) օգտին կատարել որոշակի գործողություն. այն է՝ վճարել դրամ, հանձնել գույք, կատարել աշխատանք, մատուցել ծառայություն և այլն, կամ ձեռնպահ մնալ որոշակի

գործողություն կատարելուց, իսկ պարտատերն իրավունք ունի պարտապանից պահանջել կատարելու իր պարտականությունը:

Պայմանագրի 2.1.7 կետի համաձայն՝ Գնորդը իրավունք ունի միակողմանի լուծել պայմանագիրը (լրիվ կամ մասնակի), եթե վաճառողն էականորեն խախտել է պայմանագիրը.

Վաճառողի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե.

ա) մատակարարվել է անպատշաճ որակի ապրանք որը չի կարող փոխարինվել Գնորդի համար ընդունելի ժամկետում,

բ) ապրանքի մատակարարման ժամկետները խախտվել են 1 օրից ավելի:

Պայմանագրի տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցը սահմանող թիվ 1 հավելվածով սահմանվում է, որ մատակարարումն իրականացվում է առնվազն ամիսը երկու անգամ: Մատակարարման կոնկրետ օրը որոշվում է Գնորդի կողմից նախնական (ոչ շուտ քան 3 աշխատանքային օր առաջ) պատվերի միջոցով՝ էլ. փոստով կամ հեռախոսազանգով:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 466-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ պայմանագիրը լրիվ կամ մասնակի կատարելուց միակողմանի հրաժարվելու դեպքում, երբ պայմանագրից հրաժարվելը թույլատրվում է օրենքով կամ կողմերի համաձայնությամբ, պայմանագիրը համապատասխանաբար համարվում է լուծված կամ փոփոխված:

Հաշվի առնելով այն հանգամանքը, որ Ընկերությունը խախտել է պայմանագրով սահմանված պարտավորությունները՝ Երևանի քաղաքապետարանը, ղեկավարվելով վերը նշված իրավական հիմքերով, միակողմանի հրաժարվում է կնքված պայմանագրից՝ համարելով այն լուծված, պատշաճ ծանուցումն ապահովելու նպատակով՝ կկիրառվի ՀՀ կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման մասին» Կարգի 33-րդ կետի 17-րդ ենթակետով սահմանված դրույթները»:

4. Պատվիրատուի կողմից www.procurement.am հասցեով գործող ինտերնետային կայքում (հետայսու նաև՝ Տեղեկագիր) 28.07.2021թ հրապարակվել է Պայմանագիրը միակողմանի լուծելու մասին ծանուցումը:

5. ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի հիմնավորումները և եզրահանգումը.

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձ Գրիգոր Ներսիսյանս, ուսումնասիրելով ՀՀ ֆինանսների նախարարության 05.08.2021թ. թիվ 26/26-1/12501-2021 գրությունը, Երևանի քաղաքապետարանի 29.07.2021թ. թիվ 01/61-89183 գրությունը և կից փաստաթղթերը, ինչպես նաև Ա/Ձ Հմայակ Գեղեցիկի Վարդանյանի դիրքորոշումը, հայտնում եմ հետևյալը.

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 345-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ պարտավորության ուժով մի անձը (պարտապանը) պարտավոր է մեկ այլ անձի (պարտատիրոջ) օգտին կատարել որոշակի գործողություն. այն է՝ վճարել դրամ, հանձնել գույք, կատարել աշխատանք, մատուցել ծառայություն և այլն, կամ ձեռնպահ մնալ որոշակի գործողություն կատարելուց, իսկ պարտատերն իրավունք ունի պարտապանից պահանջել կատարելու իր պարտականությունը:

Նույն օրենսգրքի 408-րդ հոդվածի համաձայն՝ պարտավորության խախտում է համարվում այն չկատարելը կամ անպատշաճ (կետանցով, ապրանքների, աշխատանքների և ծառայությունների թերություններով կամ պարտավորության բովանդակությամբ որոշվող այլ պայմանների խախտմամբ) կատարելը:

«Գնումների մասին» ՀՀ օրենքի (հետայսու նաև՝ Օրենք) 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի համաձայն՝ բացառությամբ նույն օրենքի 23-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին, 3-րդ, 4-րդ և 5-րդ կետերով նախատեսված ընթացակարգով գնում կատարելու դեպքերի՝ գնումների ընթացակարգերին մասնակցելու իրավունք չունեն այն անձինք, որոնք հայտը ներկայացնելու օրվա դրությամբ ներառված են գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում: Մասնակիցն ընդգրկվում է նշված ցուցակում, եթե ՝

ա. խախտել է պայմանագրով նախատեսված կամ գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը, որը հանգեցրել է պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի լուծմանը կամ գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը,

բ. որպես ընտրված մասնակից հրաժարվել է պայմանագիր կնքելուց,

գ.հայտերը բացելուց հետո հրաժարվել է գնման գործընթացին հետագա մասնակցությունից:

Օրենքի 6-րդ հոդվածի 2-րդ մասը սահմանում է, որ գնումների գործընթացին մասնակցելու իրավունքից զրկված մասնակցի վերաբերյալ ունեցած տեղեկությունների հիման վրա լիազորված մարմինը ընթացակարգ է նախաձեռնում գնումների հետ կապված բողոքներ քննող մարմնում՝ առանց վճարի: Տվյալ մասնակցի կարծիքը լսելուց հետո Գնումների հետ կապված բողոքներ քննող անձը նույն օրենքի 50-րդ հոդվածի 6-րդ մասով սահմանված ժամկետում որոշում է կայացնում մասնակցին սույն հոդվածով նախատեսված ցուցակում ընդգրկելու վերաբերյալ: Անձը նշված ցուցակում ընդգրկվում է երկու տարի ժամկետով:

Այսպես, Երևանի քաղաքապետարանի և Ա/Ձ Հմայակի Գեղեցիկի Վարդանյանի միջև 14.05.2021թ. կնքվել է «ԵՔ-ՀԲՄԱՊՁԲ-21/2-2» ծածկագրով ապրանքի ձեռքբերման գնման պայմանագիր, որի 1-ին կետի 1.1 ենթակետի համաձայն՝ Վաճառողը պարտավորվել է սույն պայմանագրով սահմանված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով Գնորդին մատակարարել պայմանագրի N 1 հավելվածով՝ Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցով նախատեսված ապրանքը, իսկ Գնորդը պարտավորվում է ընդունել ապրանքը և վճարել դրա համար:

Պայմանագրի N 1 հավելվածով՝ տեխնիկական բնութագրով, ապրանքի մատակարարման ժամկետ է սահմանվել պայմանագիրն ուժի մեջ մտնելու օրվանից մինչև 2021թ. դեկտեմբեր ամսվա համար սահմանված վերջին աշխատանքային օրը ներառյալ:

Ա/Ձ Հմայակ Գեղեցիկի Վարդանյանին ուղղված 27.07.2021թ. թիվ 01/61-17672 ծանուցմամբ Երևանի քաղաքապետարանը հայտնել է հետևյալը.

«Երևանի քաղաքապետարանի և Ա/Ձ Հմայակ Գեղեցիկի Վարդանյանի միջև 14.05.2021թ. կնքված ԵՔ-ՀԲՄԱՊՁԲ-21/2-2 ծածկագրով գնման պայմանագրի 1.1 կետի համաձայն՝ Վաճառողը պարտավորվում է սույն պայմանագրով սահմանված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով Գնորդին մատակարարել պայմանագրի 1 հավելվածով՝ տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցով նախատեսված ապրանքը, իսկ գնորդը պարտավորվում է ընդունել ապրանքը և վճարել դրա համար:

Պայմանագրի 8.15 կետով սահմանված պայմանագրով նախատեսված պատվիրատուի իրավունքներն ու պարտականությունները ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով իրականացնող Երևանի քաղաքապետարանի ենթակայությամբ գործող մանկապարտեզները էլեկտրոնային փոստի միջոցով բազմիցս դիմել են Ընկերությանը՝ տեխնիկական բնութագրով նախատեսված ապրանքը (խտացրած կաթ) մատակարարելու

համար, սակայն համապատասխան քայլեր չեն ձեռնարկվել , Ընկերությունը չի մատակարարում պայմանագրով նախատեսված ապրանքը:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 408-րդ հոդվածի համաձայն՝ պարտավորության խախտում է համարվում այն չկատարելը կամ անպատշաճ (կետանցով, ապրանքների, աշխատանքների և ծառայությունների թերություններով կամ պարտավորության բովանդակությամբ որոշվող այլ պայմանների խախտմամբ) կատարելը:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 345-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ Պարտավորության ուժով մի անձը (պարտապանը) պարտավոր է մեկ այլ անձի (պարտատիրոջ) օգտին կատարել որոշակի գործողություն. այն է՝ վճարել դրամ, հանձնել գույք, կատարել աշխատանք, մատուցել ծառայություն և այլն, կամ ձեռնպահ մնալ որոշակի գործողություն կատարելուց, իսկ պարտատերն իրավունք ունի պարտապանից պահանջել կատարելու իր պարտականությունը:

Պայմանագրի 2.1.7 կետի համաձայն՝ Գնորդը իրավունք ունի միակողմանի լուծել պայմանագիրը (լրիվ կամ մասնակի), եթե վաճառողն էականորեն խախտել է պայմանագիրը.

Վաճառողի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե.

ա) մատակարարվել է անպատշաճ որակի ապրանք որը չի կարող փոխարինվել Գնորդի համար ընդունելի ժամկետում,

բ) ապրանքի մատակարարման ժամկետները խախտվել են 1 օրից ավելի:

Պայմանագրի տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցը սահմանող թիվ 1 հավելվածով սահմանվում է, որ մատակարարումն իրականացվում է առնվազն ամիսը երկու անգամ: Մատակարարման կոնկրետ օրը որոշվում է Գնորդի կողմից նախնական (ոչ շուտ քան 3 աշխատանքային օր առաջ) պատվերի միջոցով՝ էլ. փոստով կամ հեռախոսազանգով:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 466-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ պայմանագիրը լրիվ կամ մասնակի կատարելուց միակողմանի հրաժարվելու դեպքում, երբ պայմանագրից հրաժարվելը թույլատրվում է օրենքով կամ կողմերի համաձայնությամբ, պայմանագիրը համապատասխանաբար համարվում է լուծված կամ փոփոխված:

Հաշվի առնելով այն հանգամանքը, որ Ընկերությունը խախտել է պայմանագրով սահմանված պարտավորությունները՝ Երևանի քաղաքապետարանը, ղեկավարվելով վերը նշված իրավական հիմքերով, միակողմանի հրաժարվում է կնքված պայմանագրից՝

համարելով այն լուծված, պատշաճ ծանուցումն ապահովելու նպատակով՝ կկիրառվի ՀՀ կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման մասին» Կարգի 33-րդ կետի 17-րդ ենթակետով սահմանված դրույթները»:

<u>Պատվիրատուի կողմից Տեղեկագրում 28.07.2021թ հրապարակվել է Պայմանագիրը միակողմանի լուծելու մասին ծանուցումը:</u>

«Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «ա» ենթակետը սահմանում է, որ մասնակիցն ընդգրկվում է գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում, եթե խախտել է պայմանագրով նախատեսված պարտավորությունը, որը հանգեցրել է պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի լուծմանը:

Պայմանագրի 2.1.7-րդ կետի համաձայն՝ Պատվիրատուն իրավունք ունի միակողմանի լուծել պայմանագիրը, եթե վաճառողն էականորեն խախտել է պայմանագիրը.

Պայմանագրի 2.1.7.1-րդ ենթակետի համաձայն՝ վաճառողի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե՝

ա) Մատակարարվել է անպատշաճ որակի ապրանք, որը չի կարող փոխարինվել Գնորդի համար ընդունելի ժամկետում,

բ) Ապրանքի մատակարարման ժամկետները խախտվել են 10 օրից ավելի:

Այսպիսով՝ անդրադառնալով Ա/Ձ Հմայակ Գեղեցիկի Վարդանյանի կողմից ներկայացված դիրքորոշմամբ վկայակոչված փաստական հանգամանքներին՝ հարկ եմ համարում արձանագրել հետևյալը.

Ա/Ձ Հմայակ Գեղեցիկի Վարդանյանի կողմից դիրքորոշմամբ վկայակոչվել է հետևյալ հանգամանքը.

«Պայմանագիրը չկատարելու պատճառը եղել է այն, որ Ա/Ձ Հմայակ Գեղեցիկի Վարդանյանը, նույն ինքը՝ Հմայակ Վարդանյանի մոտ 20.05.2021թ. ախտորոշվել է կիսագնդի ներուղեղային արյունազեղում: Որի բուժումն իրականացնելու համար Հմայակ Վարդանյանը 20.05.2021թ. մինչև 01.06.2021թ. ստացել է ստացիոնար բուժում, իսկ 02.06.2021թ. ավարտելով ստացիոնար բուժումը ստացել է ամբուլատոր բուժում: Այս հանգամանքների բերումով է, որ Մասնակիցը չի կարողացել կատարել Պայմանագրով ստանձնած պարտավորությունները»:

Ի հավաստումն վերոգրյալի՝ Մասնակցի կողմից ներկայացվել են Էրեբունի բժշկական կենտրոնի կողմից տրված էպիկրիզը հետևյալ կլինիկական եզրափակին ախտորոշմամբ՝ 161.2: կիսագնդի ներուղեղային արյունազեղում, չճշտված, 111.0: Գերճնշումային /հիպերտոնիկ/ հիվանդություն, առավելապես սրտի ախտահարումով, սրտային անբավարարությամբ, 024.0: Գոյություն ունեցող վաղ ինսուլինակախյալ շաքարային դիաբետ, ա) հիմնական: Ուղեղի արյան շրջանառության սուր խանգարում իշեմիկ տիպ՝ արյունային ներծծմամբ: Զարկերակային հիպերտենզիա 2-րդ տիպ: Շաքարային դիաբետ 2-րդ տիպ: Վիճակ տարած սրտի շունտավորումից և ստենտավորումից: Ընդունման ամսաթիվ 20.05.2021թ., դուրս գրման ամսաթիվ 02.06.2021թ.: Ինչպես նաև ներկայացվել են բժշկական հետազոտությունների արդյունքները և հետվիրահատական ցուցումները:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 417-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ ձեռնարկատիրական գործունեություն իրականացնելիս պարտավորությունը չկատարած կամ անպատշաճ կատարած անձը պատասխանատվություն է կրում, եթե չապացուցի, որ պատշաճ կատարումն անհնար է եղել անհաղթահարելի ուժի, այսինքն՝ տվյալ պայմաններում արտակարգ և **<u>անկանխելի հանգամանքների հետևանքով</u>**, եթե այլ բան նախատեսված չէ օրենքով կամ պայմանագրով: (…)

Այսպիսով՝ Մասնակցի կողմից Պայմանագրով ստանձնած պարտավորության, այն է՝ նախատեսված ապրանքը չմատակարարելը, պայմանավորված է եղել Հմայակ Վարդանյանի մոտ առողջական խնդիրներ ծագելու հանգամանքով, և դրա հետևանքով վերջինիս հետվիրահատական և վերականգնողական շրջանում գտնվելով:

Վերոգրյալով պայմանավորված՝ գտնում եմ, որ Մասնակցի կողմից վերը շարադրված հանգամանքերում դրսևորած վարքագիծը չի կարող հանգեցնել «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «ա» ենթակետով նախատեսված պատասխանատվության, ***<u>քանի որ Ա/Ձ Հմայակ Գեղեցիկի Վարդանյանը նման պայմաններում, այն է՝ ծագած անկանխելի հանգամանքների հետևանքով, օբյեկտիվորեն իր կամքից անկախ պատճառներով զրկված է եղել Պայմանագրի շրջանակներում ստանձնած պարտականությունները կատարելու հնարավորությունից:</u>***

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 50-րդ հոդվածի 7-րդ մասի 2-րդ կետով՝

ՈՐՈՇԵՑԻ

Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 05.08.2021թ. թիվ 26/26-1/12501-2021 գրությամբ Ա/Ձ Հմայակ Գեղեցիկի Վարդանյանին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգը մերժել:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի որոշումն իրավապարտադիր է և ուժի մեջ է մտնում տեղեկագրում հրապարակվելու հաջորդ օրը:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի որոշումը կարող է փոփոխվել կամ վերացվել, այդ թվում՝ մասնակի, միայն դատարանի կողմից:

Գնումների հետ կապված բողոքներ քննող անձ՝ **ԳՐԻԳՈՐ ՆԵՐՍԻՍՅԱՆ**